

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

1.1. Համախառն ներքին արդյունքի ցուցանիշը

1.1.1. 2004թ. հունվար-օգոստոսի ՀՆԱ ցուցանիշը

Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ծավալը, ընթացիկ գներով, 2004թ. հունվար-օգոստոսին կազմել է 980737.7 մլն. դրամ, իսկ աճի տեմպը 2003թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 109.7%:

ՀՆԱ-ի աճը հանրապետությունում հիմնականում պայմանավորված է տնտեսության 5 բազային ճյուղերի աճով: Ընդհանուր առմամբ, այդ ճյուղերի հաշվին ապահովվել է ավելացված արժեքի արտադրության 109.6% աճ: Դրա հետ մեկտեղ, ՀՆԱ-ի կառուցվածքում 5 բազային ճյուղերի տեսակարար կշիռը 2003թ. հունվար-օգոստոսի համեմատությամբ ավելացել է 1.0 տոկոսային կետով:

ՀՆԱ-ի արտադրությունն ըստ տնտեսության հիմնական բազային ճյուղերի

(%)

	Աճի տեմպը նախորդ տարվա համապատասխան ժամանակահատ- վածի նկատմամբ		Նպաստման չափը (տոկոսային կետով) ՀՆԱ-ի հավելածին		ՀՆԱ-ի կառուցվածքը ընդամենի նկատմամբ	
	հունվար- օգոստոս					
	2003	2004	2003	2004	2003	2004
ՀՆԱ-ն հիմնական գներով	115.4	110.7	13.7	9.5	89.2	90.1
<i>այդ թվում՝</i>						
արդյունաբերություն	119.2	103.2	4.7	0.8	23.9	23.7
գյուղատնտեսություն	100.1	114.4	0.0	2.6	18.1	19.4
շինարարություն	155.6	112.5	6.0	1.7	14.0	13.7
տրանսպորտ և կապ	110.4	115.4	0.5	0.7	4.7	4.7
առևտուր և հանրային սնունդ	113.6	109.2	1.3	0.9	9.7	9.9
Ընդամենը բազային ճյուղեր	117.7	109.6	12.5	6.7	70.4	71.4
Ընդամենը այլ ճյուղեր	106.5	114.9	1.2	2.8	18.8	18.7
Ապրանքների (արտադրանքի) զուտ (հանած սուբսիդիաներ) հարկեր	110.0	101.5	1.1	0.2	10.8	9.9
ՀՆԱ-ն շուկայական գներով	114.8	109.7	14.8	9.7	100.0	100.0

Արտադրված ՀՆԱ-ի կառուցվածքը

(ընդամենի նկատմամբ, %)

	Հունվար- օգոստոս	
	2003թ.	2004թ.
ՀՆԱ, շուկայական գներով	100.0	100.0
<i>այդ թվում՝</i>		
ապրանքներ	56.2	57.0
ծառայություններ	33.0	33.1
ապրանքների (արտադրանքի) զուտ (հանած սուբսիդիաներ) հարկեր	10.8	9.9